ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/172

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Տեքսուորլդ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Տեքսուորլդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Ենգոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/8» ծածկագրով բաց մրցույթ, քնապարկերի և վրանների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 21.06.2021թ.-ի թիվ 01.1/26-1/10096-2021 գրությամբ «Տեքսուորլդ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 22.06.2021թ.-ի թիվ ՊՆ/02/3185-2021 գրության հիման վրա, 21.06.2021թ.-ին «Տեքսուորլդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 21.06.2021թ.-ին:

22.06.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2021/172 համարի ծածկագիրը:

09.07.2021թ.-ին և 21.07.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 09.07.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 21.07.2021թ.-ին:

2. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 22.06.2021թ.-ի թիվ ՊՆ/02/3185-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/8» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ), ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև <Տեքսուորլդ> ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից): Մասնակցի կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում առկա էր անհամապատասխանություն: 2021թ. հունիսի 7-ին Մասնակցին ծանուցվել է տեխնիկական բնութագրի շտկման վերաբերյալ, սակայն սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը, ուստի 14.06.2021թ. գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների

գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, մերժել է <Տեքսուորլդ> ՍՊ ընկերության հայտը:

Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար կից ներկայացվում է Մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/8» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Տեքսուորլդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 22.06.2021թ.-ին գրությամբ դիմել է «Տեքսուորլդ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.06.2021թ.-ի թիվ 01.1/26-1/10096-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը, 14.07.2021թ.-ին ներկայացնելով գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

««Տեքսուորլդ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ քնապարկերի, վրանների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/8» ծածկագրով բաց մրցույթ /այսուհետև նաև՝ Ընթացակարգ/:

Հայտերի բացման ժամկետ է սահմանվել՝ 2021թ. մայիսի 27-ին, ժամը 11:00-ին:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Տեքսուորլդ» ՍՊԸ-ն:

www.gnumner.am համացանցային կայքում հայտերի բացման, ինչպես նաև հայտերի գնահատման արձանագրությունները հրապարակվել են միայն 18.06.2021թ.(հայտերի բացումից հետո գրեթե մեկ ամիս անց) :

Ընկերությանը 07.06.2021թ. ուղարկվել է էլեկտրոնային նամակ, որում ազատ ոճով նշվել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ ՊՆ կարիքների համար անհրաժեշտ ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/8» ծածկագրով ընթացակարգին Ձեր կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

Հավելված 1.1-ի 3-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է «Արտադրված է՝ համաձայն 8789-008-62963111-2010 տեխնիկական պայմանի կամ ոչ պակաս համարժեք», «Վրանի ներքին պաստառը (նամյուտը) արտադրված է՝ համաձայն 29298-2005 ԳՕՍՏ-ի, մարմնահագի և անկողնային սպիտակեղենի համար օգտագործվող գործվածքից (սպիտակ բյազից (արտիկուլ 224 կամ համարժեք)), մակերեսային խտությունը՝ 138-150գր/մ2 կամ համարժեք)», «Վրանի կախովի տաքացնող պատերը արտադրված են հրակայուն նյութով ներծծմամբ կոշտ ֆլանելի գործվածքից (արտիկուլ 6746 կամ համարժեք), մակերեսային խտությունը՝ 300գր/մ2 կամ համարժեք»: Ձեր կողմից պետք է ներկայացվի կամ հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջը կամ այլ պահանջ, առանց կամ համարժեքի:

Բացի այդ, Ձեր կողմից չի նշվել՝ Արտաքին տեսքը պարբերության մեջ ներառված «Դռներից մեկի կողային եզրին մշակված են 4 հատ արհեստական մանրաթելից գործված օղակներ, իսկ մյուսի եզրին՝ գրեթե վերջամասում 4 հատ կոճգամներ, դռները ամրացնելու համար» դրույթը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը:

Անհրաժեշտ է սույն ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Շտկված տարբերակը անհրաժեշտ է ուղարկել էլ. փոստ՝ a.grigoryan@mil.am հասցեով:»

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից մինչև 18.06.2021թ. որևէ արձանագրություն չի հրապարակվել gnumner.am համացանցային հայքում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.06.2021թ. կայքում հրապարակված 07.06.2021թ. արձանագրության 2.3 կետի համաձայն.

«Տեքսուորլդ» ՍՊԸ-ի հայտով ներկայացրած փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ - Հավելված 1.1-ի 3-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է «Արտադրված է՝ համաձայն 8789-008-62963111-2010 տեխնիկական պայմանի կամ ոչ պակաս համարժեք», «Վրանի ներքին պաստառը (նամյոտը) արտադրված է՝ համաձայն 29298-2005 ԳՕՍՏ-ի, մարմնահագի և անկողնային սպիտակեղենի համար օգտագործվող գործվածքից (սպիտակ բյազից (արտիկուլ 224 կամ համարժեք)), մակերեսային խտությունը՝ 138-150գր/մ2 կամ համարժեք)», «Վրանի կախովի տաքացնող պատերը արտադրված են հրակայուն նյութով ներծծմամբ կոշտ ֆլանելի գործվածքից (արտիկուլ 6746 կամ համարժեք), մակերեսային խտությունը՝ 300գր/մ2 կամ համարժեք»: Մասնակցի կողմից պետք է ներկայացվի կամ հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջը կամ այլ պահանջ, առանց կամ համարժեքի:

Բացի այդ, «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի կողմից չի նշվել՝ Արտաքին տեսքը պարբերության մեջ ներառված «Դռներից մեկի կողային եզրին մշակված են 4 հատ արհեստական մանրաթելից գործված օղակներ, իսկ մյուսի եզրին՝ գրեթե վերջամասում 4 հատ կոճգամներ, դռները ամրացնելու համար» դրույթը:

Նույն արձանագրության համաձայն՝ «Տեքսուորլդ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայցրել է պահանջվող Հավելված 1.1-ը: Հավելված 1.1-ի 3-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է «Վրանի կախովի տաքացնող պատերը արտադրված են հրակայուն նյութով ներծծմամբ կոշտ ֆլանելի գործվածքից (արտիկուլ 6746 կամ համարժեք), մակերեսային խտությունը՝ 300գր/մ2 կամ համարժեք»: «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի կողմից պետք է ներկայացվեր կամ հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված արտիկուլ 6746 կամ այլ արտիկուլ, առանց կամ համարժեքի, սակայն մասնակցի կողմից ներկայացված շտկված տեխնիկական բնութագրից ընդհանրապես հանվել է «արտիկուլ 6746 կամ համարժեք» պահանջը: Մնացած անհամապատասխանությունները շտկել է: Հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, 14.06.2021թ. մերժել է «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի հայտը:

ա) «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

ՀՀ կառավարության 526-Ն որոշման 32-րդ կետի 22-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված մինչև հինգ, իսկ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի ներկայացրած փաստաթղթերի գնահատումը՝ դրանք ներկայացվելու օրվանից հաշված մինչև տասն աշխատանքային օրվա ընթացքում: Եթե գնման ընթացակարգի չափաբաժինների քանակը գերազանցում է յոթանասունհինգ չափաբաժինը, ապա հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված մինչև տասներկու, իսկ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի ներկայացրած փաստաթղթերի գնահատումը՝ դրանք ներկայացվելու օրվանից հաշված մինչև տասնյոթ աշխատանքային օրվա ընթացքում:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «Տեքսուորլդ» ՍՊԸ-ն Ընթացակարգի ոչ թափանցիկ, որ հրապարակային լինելու հետևանքով զրկվել է իր մասնակցության իրավունքից լիարժեք օգտվելու հնարավորությունից:

Մասնավորապես՝ Օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

Օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ Հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում: Պետական գաղտնիք պարունակող գնումների կատարման դեպքում սույն մասով նախատեսված արձանագրությունը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրն ուղարկվում է հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ հանգամանքների վրա.

Նախ, ուսումնասիրվել է Ընթացակարգի հրավերը, որի համաձայն հայտերի բացման ժամկետ է սահմանվել՝ 2021թ. մայիսի 27-ին, ժամը 11:00-ին, սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից մինչև 18.06.2021թ. որևէ արձանագրություն չի հրապարակվել www.gnumner.am համացանցային հայքում:

Վերը նշվածով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է գնումների մասի ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, այն է՝ Օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասի և 34-րդ հոդվածի 9-րդ մասերի պահանջները:

Բացի այդ, Ընկերությունը շտկման ծանուցում չի ստացել, այլ ընդամենը միայն հայտերը բացելուց հետո գրեթե 10 օր անց, այսինքն 07.06.2021թ., ստացել է էլեկտրոնային նամակ, որում ազատ ոճով նշվել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ ՊՆ կարիքների համար անհրաժեշտ ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/8» ծածկագրով ընթացակարգին Ձեր կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

Հավելված 1.1-ի 3-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է «Արտադրված է՝ համաձայն 8789-008-62963111-2010 տեխնիկական պայմանի կամ ոչ պակաս համարժեք», «Վրանի ներքին պաստառը (նամյոտը) արտադրված է՝ համաձայն 29298-2005 ԳՕՍՏ-ի, մարմնահագի և անկողնային սպիտակեղենի համար օգտագործվող գործվածքից (սպիտակ բյազից (արտիկուլ 224 կամ համարժեք)), մակերեսային խտությունը՝ 138-150գր/մ2 կամ համարժեք)», «Վրանի կախովի տաքացնող պատերը արտադրված են հրակայուն նյութով ներծծմամբ կոշտ ֆլանելի գործվածքից (արտիկուլ 6746 կամ համարժեք), մակերեսային խտությունը՝ 300գր/մ2 կամ համարժեք»: Ձեր կողմից պետք է ներկայացվի կամ հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջը կամ այլ պահանջ, առանց կամ համարժեքի:

Բացի այդ Ձեր կողմից չի նշվել՝ Արտաքին տեսքը պարբերության մեջ ներառված «Դռներից մեկի կողային եզրին մշակված են 4 հատ արհեստական մանրաթելից գործված օղակներ, իսկ մյուսի եզրին՝ գրեթե վերջամասում 4 հատ կոճգամներ, դռները ամրացնելու համար» դրույթը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը:

Անհրաժեշտ է սույն ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Շտկված տարբերակը անհրաժեշտ է ուղարկել էլ.փոստ՝ a.grigoryan@mil.am հասցեով:»

Բացի այդ բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ գնահատող հանձնաժողովի կողմից չեն պահպանվել ՀՀ կառավարության 526-Ն որոշման 32-րդ կետի 22-րդ ենթակետով սահմանված հայտերի գնահատման ժամկետները, մասնավորապես, Ընթացակարգով հայտերի բացումը տեղի է ունեցել 2021թ. մայիսի 27-ին, ժամը 11:00-ին, սակայն «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի հայտի գնահատումը ավարտվել է 14.06.2021թ., այնինչ ՀՀ կառավարության 526-Ն որոշման 32-րդ կետի 22-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված մինչև հինգ, իսկ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի ներկայացրած փաստաթղթերի գնահատումը՝ դրանք ներկայացվելու օրվանից հաշված մինչև տասն աշխատանքային օրվա ընթացքում:

Վերը նշվածով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է գնումների մասի ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, այն է՝ Օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասի և 34-րդ հոդվածի 9-րդ մասերի պահանջները, որոնք հանգեցրել են Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գնման գործընթացի թափանցիկ և հրապարակային հիմունքներով կազմակերպման սկզբունքի խախտմանը, և «Տեքսուորլդ» ՍՊԸ-ին զրկվել է իր մասնակցության իրավունքից լիարժեք օգտվելու հնարավորությունից:

Նման ոչ իրավաչափ գործողությունների և գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների խախտումների պայմաններում, գտնում ենք, որ Կարգի 41-րդ կետով «Տեքսուորլդ» ՍՊԸ-ին ներկայացված շտկման պահանջը եղել է ոչ իրավաչափ, քանի որ այն զուգորդվել է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 8-րդ մասի, 34-րդ հոդվածի 9-րդ մասի, Կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետի պահանջների կոպիտ խախտմամբ:

բ) Բացի այդ, իչպես հայտնել ենք, ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ քնապարկերի, վրանների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/8» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից «Տեքսուորլդ» ՍՊԸ-ին 07.06.2021թ. ուղարկվել է էլեկտրոնային նամակ, որում ազատ ոճով նշվել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ ՊՆ կարիքների համար անհրաժեշտ ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/8» ծածկագրով

ընթացակարգին Ձեր կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

Հավելված 1.1-ի 3-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է «Արտադրված է՝ համաձայն 8789-008-62963111-2010 տեխնիկական պայմանի կամ ոչ պակաս համարժեք», «Վրանի ներքին պաստառը (նամյոտը) արտադրված է՝ համաձայն 29298-2005 ԳՕՍ-ի, մարմնահագի և անկողնային սպիտակեղենի համար օգտագործվող գործվածքից (սպիտակ բյազից (արտիկուլ 224 կամ համարժեք)), մակերեսային խտությունը՝ 138-150գր/մ2 կամ համարժեք)», «Վրանի կախովի տաքացնող պատերը արտադրված են հրակայուն նյութով ներծծմամբ կոշտ ֆլանելի գործվածքից (արտիկուլ 6746 կամ համարժեք), մակերեսային խտությունը՝ 300գր/մ2 կամ համարժեք»: Ձեր կողմից պետք է ներկայացվի կամ հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջը կամ այլ պահանջ, առանց կամ համարժեքի:

Բացի այդ, Ձեր կողմից չի նշվել՝ Արտաքին տեսքը պարբերության մեջ ներառված «Դռներից մեկի կողային եզրին մշակված են 4 հատ արհեստական մանրաթելից գործված օղակներ, իսկ մյուսի եզրին՝ գրեթե վերջամասում 4 հատ կոճգամներ, դռները ամրացնելու համար» դրույթը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը:

Անհրաժեշտ է սույն ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Շտկված տարբերակը անհրաժեշտ է ուղարկել էլ.փոստ՝ a.grigoryan@mil.am հասցեով:»

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.06.2021թ. կայքում հրապարակված 07.06.2021թ. արձանագրության 2.3 կետի համաձայն.

«Տեքստուորլդ» ՍՊԸ-ի հայտով ներկայացրած փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ - Հավելված 1.1-ի 3-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է «Արտադրված է՝ համաձայն 8789-008-62963111-2010 տեխնիկական պայմանի կամ ոչ պակաս համարժեք», «Վրանի ներքին պաստառը (նամյոտը) արտադրված է՝ համաձայն 29298-2005 ԳՕՍ-ի, մարմնահագի և անկողնային սպիտակեղենի համար օգտագործվող գործվածքից (սպիտակ բյազից (արտիկուլ 224 կամ

համարժեք)), մակերեսային խտությունը՝ 138-150գր/մ2 կամ համարժեք)», «Վրանի կախովի տաքացնող պատերը արտադրված են հրակայուն նյութով ներծծմամբ կոշտ ֆլանելի գործվածքից (արտիկուլ 6746 կամ համարժեք), մակերեսային խտությունը՝ 300գր/մ2 կամ համարժեք»: Մասնակցի կողմից պետք է ներկայացվի կամ հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջը կամ այլ պահանջ, առանց կամ համարժեքի:

Բացի այդ, «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի կողմից չի նշվել՝ Արտաքին տեսքը պարբերության մեջ ներառված «Դռներից մեկի կողային եզրին մշակված են 4 հատ արհեստական մանրաթելից գործված օղակներ, իսկ մյուսի եզրին՝ գրեթե վերջամասում 4 հատ կոճգամներ, դռները ամրացնելու համար» դրույթը:

Նույն արձանագրության համաձայն՝ «Տեքսուորլդ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայցրել է պահանջվող Հավելված 1.1-ը: Հավելված 1.1-ի 3-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է «Վրանի կախովի տաքացնող պատերը արտադրված են հրակայուն նյութով ներծծմամբ կոշտ ֆլանելի գործվածքից (արտիկուլ 6746 կամ համարժեք), մակերեսային խտությունը՝ 300գր/մ2 կամ համարժեք»: «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի կողմից պետք է ներկայացվեր կամ հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված արտիկուլ 6746 կամ այլ արտիկուլ, առանց կամ համարժեքի, սակայն մասնակցի կողմից ներկայացված շտկված տեխնիկական բնութագրից ընդհանրապես հանվել է «արտիկուլ 6746 կամ համարժեք» պահանջը: Մնացած անհամապատասխանությունները շտկել է: Հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, 14.06.2021թ. մերժել է «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի հայտը:

Այս կապակցությամբ բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ հետևյալ հանգամանքները.

Ընթացակարգի հրավերի Տեխնիկական-բնութագրի համաձայն՝ «Վրանի կախովի տաքացնող պատերը» մասում սահմանված են հետևյալ պարամետրերը. «Արտադրված են հրակայուն նյութով ներծծմամբ կոշտ ֆլանելի գործվածքից (արտիկուլ 6746 կամ համարժեք), մակերեսային խտությունը՝ 300գր/մ2 կամ համարժեք: Գործվածքի խզման բեռնվածությունը 50x200 չափսերի կտորի վրա՝ հենքով՝ ոչ պակաս, քան 40կգ/սմ, իսկ միջնաթելով՝ 35կգ/սմ, լվացման մաշվածադիմաց-կունությունը՝ ոչ պակաս, քան 600 ցիկլ»:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ Ընթացակարգի Հրավերի այս հատվածում Պատվիրատուն նշելով ֆլանելի գործվածքի արտիկուլը՝ 6746, այնուհետև շարադրել է այդ արտիկուլով սահմանված պահանջները:

Փաստորեն, «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի կողմից Հավելված 1.1-ի 3-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրի «Վրանի կախովի տաքացնող պատերը» մասում նշվել են

հրավերով նախատեսված բոլոր տեխնիկական պարամետրերը՝ բացառությամբ արտիկուլի թվի:

Բանն այն է, որ նախ, տվյալ հատվածում նշվել են արտիկուլին բնորոշ և Պատվիրատուի կողմից պահանջված բոլոր պարամետրերը: Այսինքն անկախ նրանից, որ չէր նշվել արտիկուլի համարը, ներկայացրած Հավելված 1.1-ում «Տեքստուրլդ» ՍՊԸ-ն պարտավորվել էր մատակարարել անպիսի ապրանքատեսակ, որը համապատասխանում է Պատվիրատուի կողմից պահանջված վրանի կախովի տաքացնող պատերին ներկայացվող պահանջներին, այսինքն ֆլանելի գործվածքին ներկայացվող պահանջներին:

Այս տեսանկյունից գտնում ենք, որ միայն արտիկուլի համարը չնշելը, երբ նշված են գործվածքի արտիկուլը բնութագրող բոլոր պարամետրերը, հիմք չէր հայտը մերժելու համար և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը դրևսորել է ձևական վարչարարություն:

Բացի այդ, բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ Պատվիրատուի կողմից ֆլանելի գործվածքի համար, ըստ էության, նշվել է գոյություն չունեցող արտիկուլի թիվ՝ 6746: Վերոհիշյալը /բնության մեջ գոյություն չունենալը/ հավաստվում է նաև ինտերնային տիրույթում սովորական փնտրման եղանակի միջոցով:

Ի հավաստումն նրան, որ առկա չէ ֆլանելի գործվածք, որը ունի արտիկուլի 6746 համար, այսինքն բնության մեջ գոյություն չունի թիվ 6746 արտիկուլի գործվածք՝ Ձեզ ենք ներկայացնում ООО <<РЕДИКС ПЛЮС>> ընկերության 08.06.2021թ. գրությունը, որը հաստատում է, որ 6746 արտիկուլի ֆլանելային գործվածքի համար՝ գույություն չունի /գրության պատճենը կցվում է/:

Միևնույն ժամանակ տեղեկացնում ենք, որ ООО <<РЕДИКС ПЛЮС>> ընկերությունը պարտավորվել էր մեզ մատակարարել Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով 3-րդ չափաբաժնի համար նախատեսված չափանիշներին համապատասխանող ապրանք:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նաև նկատի ունանլ, որ ըստ ՍՊԸ-ի՝ վիճելի է նաև արտիկուլի մասով տրված շտկման հիմնավորումը, մասնավորապես, գնահատող հանձնաժողովը նշել է, որ «Տեքստուրլդ» ՍՊԸ-ի կողմից նշվել է արտիկուլ 6746 կամ համարժեք, մինչդեռ «Տեքստուրլդ» ՍՊԸ-ի կողմից պետք է ներկայացվեր կամ հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված արտիկուլ 6746 կամ այլ արտիկուլ, առանց կամ համարժեքի:

Գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովի շտկման պահանջը այս մասով ի սկզբանե եղել է ոչ իրավաչափ, քանի որ այս մասով ՍՊԸ-ն չի խախտել Ընթացակարգի

հրավերի որևէ պահանջ, և այս դեպքում առկա չի եղել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտում:

Գտնում ենք, որ նման պարագայում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի հայտը մերժել է ոչ իրավաչափ:

Արդյունքում նման ոչ իրավաչափ գործողությունները հանգեցրել են ոչ միայն «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի հայտը մերժելուն, այլ նաև տարիների աշխատանքային փորձ ունեցող ընկերությանը կանգնեցրել են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առջև:»:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Տեքսուորլդ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:»:

4. <u>ՍՑ-LO-2021/172 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից քնապարկերի և վրանների ձեռքբերման նպատակով 16.04.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/8» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցի համաձայն՝ 3-րդ չափաբաժնով սահմանվել է հետևյալը. «…վրանի կախովի տաքացնող պատերը արտադրված են հրակայուն նյութով ներծծմամբ կոշտ ֆլանելի գործվածքից (արտիկուլ 6746 կամ համարժեք), մակերեսային խտությունը՝ 300գր/մ2 կամ համարժեք: Գործվածքի խզման բեռնվածությունը 50x200 չափսերի կտորի վրա՝ հենքով՝ ոչ պակաս, քան 40կգ/սմ, իսկ միջնաթելով՝ 35կգ/սմ, լվացման մաշվածադիմաց-կունությունը՝ ոչ պակաս, քան 600 ցիկլ:…»:

iii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Տեքսուորլդ» ՍՊԸ-ն:

iv. Մասնակիցը թիվ 1.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով 3-րդ չափաբաժնի մասով ներկայացրել է ապրանքի հետևյալ տեխնիկական բնութագիրը. «…վրանի կախովի տաքացնող պատերը արտադրված են հրակայուն նյութով ներծծմամբ կոշտ ֆլանելի գործվածքից (արտիկուլ 6746 կամ համարժեք), մակերեսային խտությունը՝ 300գր/մ2 կամ համարժեք: Գործվածքի խզման բեռնվածությունը 50x200 չափսերի կտորի վրա՝ հենքով՝ ոչ պակաս, քան 40կգ/սմ, իսկ միջնաթելով՝ 35կգ/սմ, լվացման մաշվածադիմաց-կունությունը՝ ոչ պակաս, քան 600 ցիկլ:…»:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 07.06.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 2.3-րդ կետի համաձայն՝ «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված Հավելված 1.1-ով 3-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է նաև՝ վրանի կախովի տաքացնող պատերը արտադրված են հրակայուն նյութով ներծծմամբ կոշտ ֆլանելի գործվածքից (արտիկուլ 6746 կամ համարժեք), մակերեսային խտությունը՝ 300գր/մ2 կամ համարժեք, սակայն Մասնակցի կողմից պետք է ներկայացվի կամ հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջը կամ այլ պահանջ, առանց կամ համարժեքի:

vi. Նույն կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, 07.06.2021թ.-ին որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գմահատման նիստը և ծանուցել Մասնակցին, առաջարկելով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vii. Հանձնաժողովի քարտուղարի կողմից 07.06.2021թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Մասնակցի texworld@mail.ru էլ. փոստի հասցեին է ուղարկել անհամապատասխանությունների շտկման մասին ծանուցում:

viii. «Տեքսուորլդ» ՍՊԸ-ն, որպես արձանագրված անհամապատասխանությունների շտկում, 08.06.2021թ.-ին Հանձնաժողովին է ներկայացրել թիվ 1.1 հավելվածի շտկված տարբերակը՝ նշելով հետևյալը. «…վրանի կախովի տաքացնող պատերը արտադրված են հրակայուն նյութով ներծծմամբ կոշտ ֆլանելի գործվածքից, մակերեսային խտությունը՝ 300գր/մ2: Գործվածքի խզման բեռնվածությունը 50x200 չափսերի կտորի վրա՝ հենքով՝ ոչ պակաս, քան 40կգ/սմ, իսկ միջնաթելով՝ 35կգ/սմ, լվացման մաշվածադիմաց-կունությունը՝ ոչ պակաս, քան 600 ցիկլ:…»:

ix. Հանձնաժողովի նիստը շարունակվել է 14.06.2021թ.-ին, որում արձանագրվել է, որ «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացրել է Հավելված 1.1-ը,

որում սակայն արձանագրվել են անհամապատասխանություններ, այն է՝ Մասնակցի կողմից ներկայացված շտկված տեխնիկական բնութագրից ընդհանրապես հանվել է (արտիկուլ 6746 կամ համարժեք) պահանջը, ինչով պայմանավորված, Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը՝ մերժել է «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի հայտը:

x. «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է ООО «РЕДИКС ПЛЮС» ընկերության 08.06.2021թ.-ի գրությունը, որով վերջինս հայտնել է հետևյալը. *«В ответ на Ваш запрос сообщаем, что фланелевая ткань арт. 6746 не производиться и данный артикул не известен ни одному из производителей фланелевой ткани.*

С цоответствии с выше изложенным сообщаем, что фланелевая ткань под арт. 6746 не производиться.»:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.06.2021թ.-ի թիվ 01.1/26-1/10096-2021 գրությամբ «Տեքսուորլդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին

համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ

կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/8» ծածկագրով բաց մրցույթի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման

վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արդեն իսկ անդրադարձել է վկայակոչված հոդվածի մեկնաբանությանը: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Նույն հոդվածի 3-րդ կետով նախատեսվել է մեղքի բացակայության պարագայում պարտավորությունը խախտած անձի պատասխանատվությունը, եթե պարտավորությունը բխում է ձեռնարկատիրական գործունեության իրականացումից: Ընդ որում, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձն ենթակա չէ պատասխանատվության միայն այն դեպքում, եթե ապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով: Այդ կանոնը կիրառելի չէ, եթե օրենքով կամ պայմանագրով նախատեսվել է նույնիսկ անհաղթահարելի ուժի առկայության պայմաններում պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձի պատասխանատվություն կրելու հանգամանքը *(տե՛ս, «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Լանդրաս» ՓԲԸ-ի թիվ*

ԵՔԴ/0595/04/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը):

Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրը նախատեսել է, որ պարտավորությունը խախտած ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձն ազատվում է դրա համար պատասխանատվությունից, եթե ապացուցում է, որ պարտավորության պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի հետևանքով: Անհաղթահարելի ուժի կիրառումը պետք է պայմանավորված լինի այնպիսի հանգամանքների զուգորդմամբ, որոնք անհնարին են դարձնում կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումը, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով:

Միևնույն ժամանակ, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձին անհաղթահարելի ուժի հիմքով պատասխանատվությունից ազատելը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, պայմանավորված է արտակարգ և անկանխելի, այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է: Ընդ որում, ի հայտ եկած հանգամանքի արտակարգ և անկանխելի լինելը յուրաքանչյուր դեպքում պետք է դիտարկել ու գնահատել կոնկրետ պարտավորության բնույթի և դրա կատարման պայմանների շրջանակներում *(տե՛ս, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի ընդդեմ «Վլադ Հակոբյանի անվան «Համակցված կերերի գործարան» ՓԲԸ-ի թիվ ԵԷԴ/0888/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):*

Բողոքներ քննող անձը հավելում է նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Վերոգրյալի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների

կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը (ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից քնապարկերի և վրանների ձեռքբերման նպատակով 16.04.2021թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/8» ծածկագրով բաց մրցույթի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցի համաձայն՝ 3-րդ չափաբաժնով սահմանվել է հետևյալը. «…վրանի կախովի տաքացնող պատերը արտադրված են հրակայուն նյութով ներծծմամբ կոշտ ֆլանելի գործվածքից (արտիկուլ 6746 կամ համարժեք), մակերեսային խտությունը՝ 300գր/մ2 կամ համարժեք: Գործվածքի խզման բեռնվածությունը 50x200 չափսերի կտորի վրա՝ հենքով՝ ոչ պակաս, քան 40կգ/սմ, իսկ միջնաթելով՝ 35կգ/սմ, լվացման մաշվածադիմաց-կունությունը՝ ոչ պակաս, քան 600 ցիկլ:…»:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Տեքսուորլդ» ՍՊԸ-ն թիվ 1.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով 3-րդ չափաբաժնի մասով ներկայացրել է ապրանքի հետևյալ տեխնիկական բնութագիրը. «…վրանի կախովի տաքացնող պատերը արտադրված են հրակայուն նյութով ներծծմամբ կոշտ ֆլանելի գործվածքից (արտիկուլ 6746 կամ համարժեք), մակերեսային խտությունը՝ 300գր/մ2 կամ համարժեք: Գործվածքի խզման բեռնվածությունը 50x200 չափսերի կտորի վրա՝ հենքով՝ ոչ պակաս, քան 40կգ/սմ, իսկ միջնաթելով՝ 35կգ/սմ, լվացման մաշվածադիմաց-կունությունը՝ ոչ պակաս, քան 600 ցիկլ:…»: Սակայն Հանձնաժողովի 07.06.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 2.3-րդ կետով արձանագրվել է, որ «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված Հավելված 1.1-ով 3-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է նաև՝ վրանի կախովի տաքացնող պատերը արտադրված են հրակայուն նյութով ներծծմամբ կոշտ ֆլանելի գործվածքից (արտիկուլ 6746 կամ համարժեք), մակերեսային խտությունը՝ 300գր/մ2 կամ համարժեք, սակայն Մասնակցի կողմից պետք է ներկայացվի կամ հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջը կամ այլ պահանջ, առանց կամ

համարժեքի, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գմահատման նիստը և ծանուցել Մասնակցին, առաջարկելով շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչի մասին Հանձնաժողովի քարտուղարի կողմից 07.06.2021թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Մասնակցի texworld@mail.ru էլ. փոստի հասցեին է ուղարկել անհամապատասխանությունների շտկման մասին ծանուցում: «Տեքսուորլդ» ՍՊԸ-ն, որպես արձանագրված անհամապատասխանությունների շտկում, 08.06.2021թ.-ին Հանձնաժողովին է ներկայացրել թիվ 1.1 հավելվածի շտկված տարբերակը՝ նշելով հետևյալը. «...վրանի կախովի տաքացնող պատերը արտադրված են հրակայուն նյութով ներծծմամբ կոշտ ֆլանելի գործվածքից, մակերեսային խտությունը՝ 300գր/մ2: Գործվածքի խզման բեռնվածությունը 50x200 չափսերի կտորի վրա՝ հենքով՝ ոչ պակաս, քան 40կգ/սմ, իսկ միջնաթելով՝ 35կգ/սմ, լվացման մաշվածադիմաց-կունությունը՝ ոչ պակաս, քան 600 ցիկլ:...»: Հանձնաժողովի նիստը շարունակվել է 14.06.2021թ.-ին, որում արձանագրվել է, որ «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացրել է Հավելված 1.1-ը, որում սակայն արձանագրվել են անհամապատասխանություններ, այն է՝ Մասնակցի կողմից ներկայացված շտկված տեխնիկական բնութագրից ընդհանրապես հանվել է (արտիկուլ 6746 կամ համարժեք) պահանջը, ինչով պայմանավորված, Հանձնաժողովը որոշել է մերժել «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի հայտը: «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է ООО «РЕДИКС ПЛЮС» ընկերության 08.06.2021թ.-ի գրությունը, որով վերջինս հայտնել է հետևյալը. *«В ответ на Ваш запрос сообщаем, что фланелевая ткань арт. 6746 не производиться и данный артикул не известен ни одному из производителей фланелевой ткани. С цоответствии с выше изложенным сообщаем, что фланелевая ткань под арт. 6746 не производиться.»:*

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է

հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթների կիրառման անխուսափելիությունն առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտում է ընթացակարգի շրջանակներում ստանձնած որևէ պարտավորություն, որն էլ հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը: Ուստի, այն դեպքերում, երբ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Մասնակցի կողմից գնման գործընթացում ստանձնած պարտավորությունն անպատշաճ կատարելը չի կարող հանգեցնել պատասխանատվության, քանի որ բացակայում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ վերջինիս մեղքի առկայությունը: Մասնակիցը օրենքով սահմանված

պարտավորությունների կատարման համար ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն, իր կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված, հնարավոր չի եղել դրանք հասցնել իրենց տրամաբանական ավարտին:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.06.2021թ.-ի թիվ 01.1/26-1/10096-2021 գրությամբ «Տեքսուորլդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2021/172 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**